ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ 9/1

ք. Երևան 7 մայիսի 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍՈՒՄ», «ՔՎԱՆՏԱՅԻՆ ԵՎ ՄԵԶՈՍԿՈՊԻԿ ՖԻԶԻԿԱ», «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 5-րդ ու Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետերը՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. հաստատել Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ներքոհիշյալ ծրագրերը.

Հ/հ	Ֆակուլտետ/Ինստիտուտ	Կրթական ծրագիր	Գործել է/Նոր է	Գործելու է
1.	Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ	«Տվյալների գիտությունը բիզնեսում»	Գործել է երկամյա տևողությամբ (120 կրեդիտ)	Մեկուկես տարի տևողությամբ, 90 կրեդիտ
2.	Ֆիզիկայի ինստիտուտ	«Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա»	Գործել է երկամյա տևողությամբ (120 կրեդիտ)	Մեկուկես տարի տևողությամբ, 90 կրեդիտ
3.	Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	«Եվրասիական հետազոտություններ»	Նոր	Մեկուկես տարի տևողությամբ, 90 կրեդիտ

2. սահմանել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Տվյալների գիտությունը բիզնեսում» (900 000 ՀՀ դրամ), «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» (550 000 ՀՀ դրամ), «Եվրասիական հետազոտություններ» (550 000 ՀՀ դրամ) մագիստրոսական կրթական ծրագրերի վարձավճարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ